**Արձանագրություն N 3**
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-19/5 ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 17 մայիսի 2019թ
ժամը 14:30

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Մ. Մուրադյանը
անդամներ՝ Հ.Մարգարյանը, Ա.Հովհաննիսյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան
Մասնակցում էր «Էլեկտրիկա գռուպ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Շահինյանը

**I. Մասնակցի հետ գների նվազեցման բանակցություններ վարելու մասին**

---

(Մ. Մուրադյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

Սահմանված ժամկետում և հրավերի պահանջների համաձայն առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցությունների համար հրավիրված հանձնաժողովի նիստին ներկայացել էր «Էլեկտրիկա գռուպ» ՍՊԸ-ի տնօրեն Հ. Շահինյանը:

2. Հանձնաժողովը քննարկեց և որոշեց գների նվազեցման բանակցությունների համար սահմանել 10 րոպե ժամանակահատված:

2.1 Բանակցությունների համար սահմանված ժամկետի ավարտին «Էլեկտրիկա գռուպ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից կատարվել է հետևյալ նոր գնային առաջարկը 7-րդ չափաբաժնի համար.

| Ապրանքի | | | | *Մասնակցի անվանումը և նոր գնային ընդհանուր առաջարկը՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ)* | Նախահաշվային գինը՝(ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|
| Չափաբ. համարը | Անվանումը | *Չափի միավորը* | *Քանակը* | «Էլեկտրիկա գռուպ» ՍՊԸ | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 7-րդ | Տնտեսող լամպեր /ԼԵԴ լամպեր 60սմ 30-40վտ/ | հատ | 50 | 85200 | 100000 |
| 17-րդ | Մալուխ, 16մմ ²Χ 2 | մետր | 200 | | 440000 |
| 9-րդ | Մետաղալար հյուսելու 1,2մմ | կգ | 15 | | 7500 |
| 13-րդ | Մալուխ համակարգչային HDMI | մետր | 20 | | 6000 |
| 14-րդ | Մալուխ, պղնձե ջղերով, 6,0 մմ 4մմ , 6,0Χ 2 | մետր | 200 | | 34000 |

2. Ընդունելով ի գիտություն, որ 17-րդ, 9-րդ, 13-14-րդ չափաբաժինների համար նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել և 17-րդ չափաբաժնի համար առաջարկված նվազագույն գները հավասար են, 9-րդ, 13-14-րդ չափաբաժինների համար առաջարկած գները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ մերժել 17-րդ, 9-րդ, 13-14-րդ չափաբաժինների համար առաջարկված հայտերը:

բ/ 17-րդ, 9-րդ, 13-14-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն հետևյալ հիմնավորմամբ՝ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին (17-րդ չափաբաժնի համար նվազագույն գները հավասար են, 9-րդ, 13-14-րդ չափաբաժինների համար առաջարկված գինը գերազանցում է այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները):

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

## II. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների ամփոփման մասին

---

(Մ. Մուրադյան)

3. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները և ներկայացված գնային առաջարկները, որոշեց.

ա/ «Էլեկտրիկա գռուպ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 3-րդ, 4-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ չափաբաժինների համար:

բ/ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 2-րդ, 10-րդ չափաբաժինների համար:

գ/ «ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 1-ին, 5-րդ, 11-12-րդ 15-րդ չափաբաժինների համար:

դ/ «Հիդրո գրուպ» ՍՊԸ-ին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել՝ 16-րդ չափաբաժնի համար:

ե/ հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտե հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

զ/ փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստ հրավիրել ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող երրորդ աշխատանքային օրը ժամը 14.15-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| նախագահ | _____ | Մ. Մուրադյան |
| անդամներ՝ | _____ | Հ. Մարգարյան |
| | _____ | Ա.Հովհաննիսյան |
| քարտուղար՝ | _____ | Գ. Ջանջուղազյան |